

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ, 1932

ԹԻԻ 20

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Դոյութեան Իրաւունք

Տ. ձ. Խ.

Երկհարիւրեամեակ Մը

Տ. ձ. Խ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Տեւումական Աղօթք

ՊԱՏ. Կ. ՅԱՐԱՃԵԱՆ

Մեր Նոր Սերունդին Պարտականութիւնը

ՎԵՐ. Ե. ԲԱՍՈՒՆԻ

Կրօնք եւ Ազգասիրութիւն

ՊԱՏ. Թ. ԶԱԳՄԱԳՃԵԱՆ

Մեր Սրբազան Երգերը

Ե. ՏԷՐ ՄԿՐՏԻԶԵԱՆ

Գիտական Բրոնիկ

ԲԱՂԵՑ՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

Դեպ ի Փոխանակութիւն

Յ. ՊԱԼԵՈԶԵԱՆ

Հարաբա

Տ. ձ. Խ.

ԱՅԼ ԵՒԱՅԼ

Տնտեսական Նօթեր

ՀԱՅ ԿԵԱՆՔ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՂԷՎ ԶԱՆԴ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, օտարեկան բաժնեգրներէ 160 զրուշ սուրի. Սուրիոյ համար, և մէկ ու կէս տոլար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար:

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐԻ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Պատանիներու ընթերցանութեան համար կրթիչ գիրքերու պակասը խիստ զգալի է: Այս կէտը նկատի առնելով

անոր Աւետարանի խմբագրութիւնը այս անգամ հրատարակած է՝

ԲԱՐՈՅԱՎԷՊԵՐ

անուն հատորիկ մը, որ կը պարունակէ խիստ հետաքրքրական և բարոյացուցիչ 15 իրական պատմութիւններ և պատմաւածքներ: Ամէն պատանի, ինչպէս նաև դաստիարակներ և ծնողներ շատ օգտակար պիտի գտնեն զայն: Գինն է 25 զրշ. սուրիական (կամ 50 ֆէնթ Ամերիկայի և Եգիպտոսի համար): Դիմել խմբագրութեան հասցէին:



PRESCRIBE

IODO-MALT

QUINO-MALT

IDEAL TONICS

FOR ALL



Իօտօ+Մալթ=Իօտօմալթ:

Իօտօմալթի գործածութիւնը զմայլելի արդիւնք կ'ուտայ՝ թէ՛ իբրեւ կանխարգելիչ միջոց մը և թէ՛ իբրեւ բուժիչ, անհամար հիւանդութեանց մէջ, որոնց ակզորնաորութիւնը հազիւ թէ հասկնալի դարձած է:

Իօտօմալթը սահմանաւած է բուժելու ամէն տեսակ մարսողական անկանոնութիւն, որ բազմազան ձեւերով երեւան կուգայ, յանգեցնով երբեմն հիւժախտի այտուցաւոր թոքախտի, դալկահարութեան, պնդեբակութեան և երբ անոնք

զանազան բարդութեանց, մանաւանդ՝ հետեւանքներն են թերի սննդառութեան:

Քինօ+Մալթ=Քինօմալթ:

Քինօմալթը՝ անհրաժեշտ դարձան մըն է, հետզհետէ յառաջացող նիհարութեան, որ կրնայ հետեւանքն ըլլալ որեւէ ծայրայեղութեան մը, կամ չարաչար աշխատանքի:

Քինօմալթը անփոխարինելի է մանաւանդ՝ ուժաթափութեան և հիւժուժի պարագաներուն, ինչպէս նաեւ հիւանդութենէ մը վերջ, ապաքինման շրջանին համար:

Իօտօմալթը և Քինօմալթը ախորժակամ ըլլալով, դիւրաւ կ'ընան առնել դանձր մանուկներ, տարեցներ, ախկրններ, և նոյն իսկ ամէնէն ներքաճաչակ անձեր:

Զափահասներու համար.— Օրական երեք անգամ, մէյմէկ ասպուրի զգալի՝ Մանուկներու համար.— Այս զեղաչափին կէտը:

Իօտօմալթը և Քինօմալթը կը ծախուին բոլոր յայտնի զեղաբաններու մէջ:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ, 1932

ԹԻԻ 20

ԱՆՈՐՈՇՈՒԹԵԱՆ ՄԷՋԷՆ

Բ. ԳՈՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Ուէ հաւաքական կեանքի մը, ուէ կազմակերպութեան մը, հաստատութեան կամ ձեռնարկի մը գոյութիւնը արդարացնող և անհրաժեշտ դարձնող պատճառներ պէտք է գտնուին։ Այն կազմակերպութիւնները օրոք պարզապէս կը ջանան իրենց գոյութիւնը տեսականացնել՝ կը նմանին պաշտպանողական գիծի մը ետե դիւրք բռնող բանակի մը։ Այսպիսի կացութիւն մը՝ երբ մնայուն հանգամանք ստանայ առոր արդիւնքը կ'ըլլայ տկարացում՝ փոխանակ զօրացումի, նահանջ փոխանակ յառաջխաղացումի։ Ուէ մէկ հաստատութեան արժէքը կը գտնուի իր գոյութեան նպատակին մէջ, և անոր իրականացման նուիրումած իր ջանքերուն արդիւնաւորութեան մէջ։ Եթէ անոր նպատակը վսիմ է, սուրբ է, օգտակար է, այժմէական է, և անոր ջանքերը գոնէ որոշ չափով յաջողութեամբ կը պսակուին, անիկա իր գոյութիւնը կը պահէ, գոյութեան տեսականացումը հոս արդիւնք մըն է և ոչ նպատակ։ Բայց ուէ հաստատութիւն մը որ զուրկ է բարձր նպատակէ մը, կամ լքած, մոռցած է իւր սուրբ կոչումը, կամ իր նւապատակը ա'լ անօգուտ է և ժամանակավրէպ, անոր գոյութեան հիմերը խախտու են արդէն և ապագան կասկածելի է, որքան ալ ան աշխատի ինքզինքը տեսականացնել։

Հիմա հարցնենք թէ Հայ Աւետարա-

նական Եկեղեցին ունի՞ սուրբ նպատակ մը, եթէ ունի տակաւին ան կը պահէ՞ իր այժմէականութիւնը, կամ սուրբ և տակաւին այժմէական այդ նպատակին որքան հաւատարիմ է ան, և որչափ արդիւնաւոր են իր ջանքերը։

Հայ Աւետ. Եկեղեցին գերագոյն հարցն է այս, որ շատ աւելի կարեւոր է և առաջ կուգայ քան ուէ կրթական, դրամական, եկեղեցական և վարչական խնդիր մը։ Ասկէ առաջ ըսած էինք թէ Հայ Աւետարանական շարժումը հոգևոր բարեկարգչական շարժում մըն է, որուն առաւելագէտ կը պարտի իր ծագումն ու գոյութիւնը, և որուն շնորհիւ նաև պիտի կրնայ շարունակել իր գոյութիւնը, և թէ վերջապէս ան այնքան օգտակար և սպողու եղած է որքան որ ան հաւատարիմ մնացած է իր գոյապատճառին։ Բայց կրնայ ըսուիլ թէ անցեալին մէջ ասիկայ արդարանալի կրնայ ըլլալ և ներկայիս իբր հոգևոր բարեկարգչական ազգակ իր գոյութեան ա'լ պէտք չկայ։ Ասիկա մեզ կ'առաջնորդէ ներկայ Հայ եկեղեցական, կրօնական, հոգևոր պայմաններուն վերլուծումին որուն համար հիմա տեղ չունինք հոս։ Բայց այդ բոլոր պայմաններուն հոգևոր հայեացքով մէկ լուրջ քննութիւնը մեզ կ'առաջնորդէ սա անխուսափելի եզրակացութեան թէ Հայ կեանքը ներկայիս աւելի քան երբեք պէտք ունի հոգևոր բարեկարգութեան, Գրիգորի ճեշտեղոր-

քեանք եւ ուղղակի Անոր հետ հաղորդակցութեան քի՛ հաւատարման եւ քի՛ անհասկան հոգեւոր կեանքի ծնունդին եւ զարգացման: Կարգ մը մարդիկ բան գործ ըրած են Հայ Աւետ. Եկեղեցին Միշտ աւելի գոյնեւոր ցուցնել ըսելով թէ անոր մէջ հոգեւոր կեանք չկայ, թէ բանապաշտութեան եւ արդիապաշտութեան հովերը չորցուցած են զայն եւ այլն: Մենք այսպիսիներու ո՛չ համակիր ո՛չ ալ համաձայն կրնանք գտնուիլ, նախ՝ անոր համար որ այս մտայնութիւնը բարոյական կորովը կը ջլատէ եւ երկրորդ՝ յայտնուած գաղափարները իրականութեան կատարելապէս համաձայն չեն: Մենք կը հաւատանք թէ հակառակ ամէն բանի Հայ Աւետ. Եկեղեցին տակաւին կը պահէ հոգեւոր զօրաւոր եւ առողջ խմոր մը, որ կարելիութիւնն ունի աւելի ծաւալելու: Բայց մենք կ'ուզենք շեշտել բոլոր Հայ Աւետարանականներու մէջ ընդհանրապէս եւ եկեղեցիի անդամներուն եւ պաշտօնէութեան մէջ մասնաւորապէս իրենց հոգեւոր կոչումին աւելի խոր գիտակցութեան պէտքը: Քրիստոսի առումով մարդկային կեանքի հոգեւոր բարեկարգումը՝ Հայ Աւետարանական հա-

մայնքի ներսէն «կսեալ» ամէն տեղ ուր կը գտնուինք, ահա նշանակէտը որ պէտք է առանցքը կաղմէ մեր բոլոր գործունէութեանց: Ահա այս է որ մեզի գոյութեան իրաւունք կուտայ. եթէ այս նպատակը չլինք, անտեսենք մեր գոյութեան իրաւունքն ալ կորսնցուցած կ'ըլլանք:

Այս՝ յարանուանամոլութիւն չի նշանակեր. յարանուանամոլութիւնը թէպէտ եկեղեցական կազմակերպութեան համար որոշ չափով եւ որոշ ատեն մը օգտակար ըլլալ կը թուի, եւ սակայն միշտ ալ հոգեւոր գործին փաստակար եղած է: Աւետարանական շարժումին նպատակը յարանուանութիւն մը չէ եւ երբեք պէտք չէ ըլլայ:

Ուղիղ նշանակէտը որոշելէ եւ անոր գիտակցութեամբն ու շունչովը լեցուելէ ետքը կը մնայ նախ՝ զծել պէտք հղած ուղղութիւնը — որ մեզ կ'առաջնորդէ որոշելու մեր գիրքը Հայց. Եկեղեցիին հանդէպ, մեր միջավայրին հանդէպ եւ միասնարութեան հանդէպ — եւ ապա կազմակերպել աւետարանական ոյժերը:

Տ. Ժ. Խ.

ԵՐԿՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ ՄԸ

Մորաւեան Աւետ. Եկեղեցին, կամ Եղբայրներու Միութիւնը՝ ինչպէս այդ եկեղեցիին պատկանողները կը կոչեն իրենք զիրենք, բոլոր եկեղեցիներու մէջ ամէնէն աւելի աւետարանչական եռանդով լեցուն եւ իրենց թիւին համեմատելով ամէնէն շատ միասնարարներ զրկող հոգեւոր կազմակերպութիւն մը եղած է: Այս ամառ այս եկեղեցին իր միասնարարական գործունէութեան երկհարիւրամեակը տօնեց որ այս տարուան աւետարանական կեանքին կարեւոր դէպքերէն մէկը կը կազմէ:

Բարեկարգութեան նախակարապետներէն Յովհաննէս Հոսսի հոգեւոր հետեւորդները Մորաւիոյ եւ Պոհեմիոյ մէջ Բարեկարգութեան առաջ Հին Մորաւեան Եկեղեցին կազմակերպած էին, որ արագօրէն մեծնալով Հուտերի ժամանակ 200000 հետեւորդներ ունեցած էր կեդրոնական Եւրոպայի մէջ: Բայց շուրջ կեդրոնական Կաթոլիկ Եկեղեցոյ հակառակ մէտքերով յարկաւորութիւնը Երեսնամեայ Պատերազմը այս եկեղեցին զրկեթէ բնաջնջած էին: 1722ին քանի մը Մորաւեան ընտանիքներ տահմանը անցնելով Սաբոն-

իա կ'ապաստանին, որուն իշխանը կոմս Ձինձենտորֆ հոգեորդամիտ երիտասարդ մէր և արթնցած էր Գերմանիոյ մէջ «Բարեպաշտից» հոգեորդարժումէն ազդուելով։ Այս գաղթականներու թիւը շատցաւ, եւ իրենց գաղութը կոչեցին Հէրնհութ, ուր 1727 ին ամառը վերականգնեցին նոր Մորաւեան Եկեղեցին։

Հէրնհութ երկու դար շարունակ եղաւ հոգեորդեանքի վառարան մը, ուսկից միսիոնարներ աշխարհի մութ եւ անծանօթ անկիւնները Աւետարանի լոյսը տարածած են։ Առաջին միսիոնարները, երկու արհեստաւորներ, բրուս մը և հիւսն մը, 1732 Օգոստոս 21 ին, մեկնեցան Ամերիկայի Դանիական գաղթա-

վայրերէն Ս. Թոմաս կղզին։ Մորաւեան Եկեղեցին ահա այս դէպքին, ժամանակակից պատմութեան ամէնէն աչքառու և զօրաւոր ազդակներէն մին եղող միսիոնարական շարժումին սկզբընաւորութեան երկու հարիւրերորդ տարեկարծը տօնեց։ Այս փոքր բայց զօրաւոր եկեղեցին ներկայիս 13 մեծ միսիոնարական դաշտերու մէջ կը գործէ Աւետարանը քարոզելով Սառույցեալ զօտիէն սկսեալ մինչև հարաւային Սփրիկէ, Պաղեստինէն սկսեալ մինչև Մոնկոլիա և Ամերիկա։ Մորաւեան Եկեղեցին աւետարանչական եկեղեցի մըն է, և հոս է իր զօրութեան գաղտնիքը։

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ

Բ. ՄԱՍ

ՄԱՐԴՈՑ ՊԱՏԿԱՆԵԱԼ ՁՈՐՍ ՄԱՍ-ՆԱԽՈՐ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ։—

1. Մեր ամէն օրուան հացը օրէ օր մեզի տուր։ Մարմինը սնունդ կը պահանջէ, որպէսզի սօյն վանդակին մէջ հոգին կարենայ գործել։ Ամէն օրուան պէտքը ոչ միայն մարմնոյն համար հապանակ պէտք է հասկնանք հոգիին համար։ Ձի մօռնանք յիշելու նաեւ թէ այս խնդրուածը սահման ունի։ Ներկային համար առատ պաշար և կամ ապագային համար մեծամեծ մթերներ խնդրելու չենք, այլ մեր ամէն օրուան հացը, սնունդը։ Այլ խօսքով ինչ որ մեր Հայրը կը գատէ կորեւոր և լաւագոյն մեզի համար ամէն օր։

2. Եւ մեզի ներքէ մեր պարտքերը, ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն։

Այս գոհար աղօթքով կը խոստովանինք թէ մեղաւոր ենք, ինչպէս առա-

ջին խնդրուածով կը խոստովանինք թէ սուրբ է Աստուած։ Խղճի ճնշումը և անհանգստութիւնը մարդկային կեանքին մէջ մեղքին անբնական ըլլալը կ'ապացուցանէ։ Բնական կեանքը անմեղ կեանքն է։ Ճշմարիտ հաւատացեալ մը, քրիստոնէական վեհ կեանքը ապրելու համար միշտ կը պայքարի։ Քրիստոնեան եթէ երբեք իյնայ, մեղք գործէ, անմիջապէս իր խիղճը կ'ակօսի զինք տանջել, անհանգիստ ընել, ան կը գիմէ Քրիստոսի իր նախկին բնականոն վիճակին բարձրանալու համար։

Ապաշխարութեան նախապատրաստական առաջին քայլը մարդ առած կ'ըլլայ երբ կ'զգայ իր սրտին մէջ յանցաւոր ըլլալը։ Իսկ երկրորդը, երբ կ'երթայ և կ'ըսէ... ներքէ ինձի... Անառակ սրգին այսպէս ըրաւ։

Այս խնդրուածին վերջին կէտը մեր

կողմէ եղած ներման մասին է: Մինք
կը խոստովանին քու կը խոստանանք թէ
միշտ կը ներենք մեզի դէմ թշնամաւ-
թիւն ընդդէմը: Այսպէս ընելով հան-
դերձ եթէ չենք գործադրիր մեր խոս-
տումները, այն առհն մեղքին վրայ
մեզք կ'աւելցնենք:

Աշխարհի վրայ հաւատացեալի հա-
մար չենք ելու մեղքէն աւելի մեծ չա-
րիք մը գուցէ չկայ: Հակադարձաբար,
աշխարհի վրայ լաւագոյն յաղթանակը
բարիով չարի յաղթելն է:

3. Ու մեզ փորձութեան մի տանիւր:
Մեզ զգուշացուր: Նախորդ խնդրուա-
քը անցեալ մեղքի, հատարուած չա-
րիքի մը համար է. իսկ այս խնդրուա-
ծով կանխազգուշութիւն կը հայցենք:
Ապագային համար է որ կ'աղօթենք:
Անցեալի մեղքերուն համար թողու-
թիւն խնդրելով չի վերջանար գործը,
պէտք է նաեւ Տէրոջը օյժը հայցել, որ-
պէսզի մեզ ներքնապէս գինէ փորձու-
թեան աղիքներուն գէժ թիւովարկու
համար:

4. Հապա չարէն մեզ ազատէ: Ահա
գոհար և տիեզերական աղօթքին ա-
ղամանդեայ փականքը:

Եւրպ կեանքի ծովը, երբ բոլոր աշ-
խարհ կը մթազնի մեր աչքերուն առ-
ջէ, և երբ յոյսի երկինքէն բոլոր
աստղերը կը մարին, այս հոգեչարչար
տագնապնդու մէջ կը կանչենք մեր
երկնաւոր Հօր և կ'ըսենք՝ հապա չարէն
մեզ ազատէ:

1922 ի Իգմիքի մեծ աղէտին դերի
տարուած էի հազարաւորներու հե-
թիւերէն խորերը: Անխնայ կը չափ-
դէին մեզ, ամէն օր հարիւրներով:
Անգամ մը լերան մը գագաթը կը գրիչ-
րէինք. աղօթողներու թիւը չափ էր,
կ'աղօթէինք որպէսզի Աստուած չարէն
պահէ մեզ: Բովս գտնուող քանի մը
ծանօթներու ըսի. «աղօթենք որ
Աստուած չարէն մեզ ազատէ, այս ա-

ղէկ է բայց մեր շարժառիթն ալ պէտք
է ըլլայ բարձր և մաքուր: Ես կ'աղ-
թեմ որ Աստուած չարէն պահէ զիս օր-
պէսզի կարող ըլլամ իր կամքը կատա-
րել եւ իր թագաւորութեան լայնօրէն
տարածման համար ծառայել:

Քանզի քուկդ է թագաւորութիւնը
և զօրութիւնը աւ փառքը յաւիտեանս
ամէն:

գԱստուած տիեզերական Հայր ճանչ-
ցողին աղօթքն է:

—Ո՛ր Հայր մեր որ երկինքն ես,

Անոր պատիւ բերելու համար գործու-
ղին աղօթքն է:

—Բո՛ւ անունդ սուրբ ըլլայ:

Երկնային արքայութեան տարած-
ման ցանկացողին աղօթքն է:

—Բո՛ւ քաղաւորութիւնդ ցայ:

Տառապանքի և չարչարանքի համ-
բերողին աղօթքն է:

—Բո՛ւ կամիդ ըլլայ:

Առօրեայ պէտքերը գրացողին ա-
ղօթքն է:

—Մեր անեն օրուան հացը մեզի տուր:
(ըստ Ղուկասի)

Մեղաւոր ըլլալը զգացողին աղօթ-
քն է:

—Մեզի ներք մեր պարտերը:

Անյիշատիկ աղօթքն է:

—Քանզի մենք ալ կը ներենք:

Պատանի երիտասարդներուն աղօթ-
քն է:

—Մեզ փորձութեան մի օանիր:

Չարութեան ենթարկելիներուն ա-
ղօթքն է:

—Հապա չարէն մեզ ազատէ:

Հաւատացեալ և բարեպաշտ որդիներ-
ու աղօթքին կը միանան երկինք և
երկիր և ամէնը միատեղ ու միաբերան
կ'ըսեն:—

—Բուկդ քաղաւորութիւնը եւ զօրու-
թիւնը ու փառքը յաւիտեանս: Ամեն:

Սեպանիկ

Կ. Ս. ՖԱՐԱՃԵԱՆ

ՄԵՐ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Բ.

ՍՈՒՐԻՈՅ ՀԱՆԴԷՊ

Ասի կը տանի նիւթիս երկրորդ բաժանումին, որ է մեր նոր սերունդին պարտականութիւնն այս երկրի հանդէպ: Նախ և առաջ ըսեմ որ Հայերը միշտ իրենց բնական երկրին ու միջավայրին յաճախելու և ծառայելու գիտցած են: Անոնք իրենց հպատակած պետութիւններուն՝ ոչ միայն ժիր ու ճարտար և շահագրէր ձեռքերով, հապանակ միտքով ու սիրտով օգտակար եղած են: Այս կանոնին Սուրիան չի կրնար բացառութիւն ըլլալ: Հայերս հոս ալ անօգուտ չենք: Բայց ներկայ պարագաներուն ներքեւ նորէն ալ մեր արդի սերունդը մասնաւոր ուշադրութիւն ընելու և ճիշդ թափելու է որ հայ ժողովուրդին բնագոյն եղած այս պատուական հին յատկանիշը պահպանուի: Այս երկրին ու անոր ժողովուրդին ճշմարիտ շահերուն և օգտին վերաբերեալ ոնէ բան արհամարհել կամ անտեսել մեր կողմէն ամենամեծ սխալը կ'ըլլայ:

Հողատար տէրութեան լիզուն, ֆըրանսերէնը, ամենայն խնամքով սորվելէ և գործածելէ վատ, մեր գտնուած երկրին ընդհանուր լիզուն Արաբերէնն ալ պէտք է որ սորվինք, անոր շատ հարուստ գրականութիւնը կարդալու և հասկնալու էք, արաբերէն հրատարակուած թերթերուն ալ պէտք է որ մեր իննիւր բաժանորդագրուին: Այս երկրին իսկապէս իբրեւ ձեռք երկրորդ հայրենիքը նկատելով, անոր աշխարհագրութիւնն ու շրջակայութիւնը ուշադրութիւնով պէտք է որ մեր հանրայն և գնահատելու էք, այս երկրին հիւրասէր ժողովուրդը պէտք է որ

սիրէք: անոր ցաւերուն և ուրախութեանց մասնակցելու էք անկեղծօրէն անոր դէպի յառաջդիմութիւն բոլոր ձգտումներուն և ջանքերուն դուք ալ նպաստելու էք ձերովսանն: Այս երկրին նիւթական ու բարոյական հարստութիւնն աւելցնելու համար ձեր ձեռքէն եկածը ընելու էք: Վերջապէս, անոր փառքն ու պարծանքը դուք ալ զգալու էք: Այս է ուղիղ կերպը, բունական կերպը, մինչև անգամ մեզի շահաւոր կերպը, գոնէ միակ քրիստոնէական կերպը:

Սուրիա աշխարհագրականօրէն շատ հետաքրքրական երկիր է: Անոր ըսքանչելի տեսարաններն ու առողջարար կլիման, անոր ձիւնապատ լեռներն ու ընդարձակ, արգասանդ դաշտերը, անոր գետերն ու լիճերը, զայն եզերող ծովը և մինչև անգամ անապատը հիանալի են, և ուսումնասիրութեան ինչ անսպառ նիւթ կը մատակարարեն: Օտարներն իսկ անոր հետազոտութեան տաքին եր յատկացնելու ելորդ չեն սեպեր: Ինչո՞ւ մենք չը սորվինք:

Սուրիա պանծալի պատմութիւն մը ունի: Անիկա կամուրջ մը եղած է Ասիոյ և Աֆրիկէի, Արեւելքի և Արեւմուտքի միջև: Ո՛րչափ ազգեր ու ցեղեր եկած ու անցած են անոր վրայէն: քանի՞ քանի աշխարհակալներ, Բաբելոնացի, Ասորիստացի, Պարթիկ, Մակեդոնացի, Հռոմէացի, Էսպանացի, իրենց ոտից հետքերը թողած են անոր հողին և ժայռին վրայ: Եւ առոնց բոլորը լոկքանդելու և աւերելու համար եկած չեն

հոս, հապաղ շատ անգամ ալ շինելու և չէնցնելու: Անոր բնիկ իշխաններն ու թագաւորներն ալ հինէն ի վեր պարապ կեցող ծոյլ մարդիկ չեն եղած, և անոնց մայրաքաղաքներուն և ուրիշ յիշատակներուն աւերակներն անգամ հիացում կ'առնէին այցելուներուն: Այսպէս անոր հնախօսութիւնը չափազանց շահեկան է: Թէև Սուրիա գինեւորական իմաստով աշխարհակալներ չէ արտադրած անյափ, (և այս՝ թերեւս բարեբախտաբար,) սակայն և այնպէս համաշխարհային նուաճումներ կատարած են անկէ ըղիսող մասւոր, բարոյական ու հոգեւոր ուժերու միջոցաւ, ինչ որ մեծագոյն և ճշմարիտ պարծանք մըն է: Տիեզերական քաղաքակրթութեան դարգանալուն մէջ Սուրիա էական դեր ունեցած է: Հասարակ կեանքը զիւրացնող ու զարգացնող շատ մը արհեստներ անկէ ծագում առած են տարածուած են աշխարհ: Ամենահին ժամանակի վաճառականութեան առհիւրաներն էին Սիւրիոյ ժողովուրդներէն Փիւնիկցիք, որոնց ցամաքային ընդարձակ առեւտուրին և ծովային հեռուոր նաւագնացութեանց վթալով արդէն այնչափ բան լսած ու կարգացած էք: Այս վերջին ճիւղին և գաղութավայրեր հիմնելու գործին մէջ անոնք Յօններուն աւսուցիչներն էին, ու Երասոսութիւնէսի օրէն ի վեր ծնած ու ծաղկած աշխարհագրական գիտութիւնն ինչպէս գիտէք, առեւտրական այս հեռուոր ճամբորդութեանց ու նաւագնացութեանց պատուէն է: Ապակիի գիւտովը, զոր օրինակ, Փիւնիկցիք ինչ անփոխարինելի ծառայութիւն մը մատուցած են մարդկութեան: Յետոյ, հին Յօնները, իրենց իսկ խոստովանութեամբ, ալիարհուի գործածութիւնը Փիւնիկցիներէն փոխ առերին, և ամենանոր հետազօտութիւնները բնաւ տարակոյտի աեղ չեն թողաւ որ

աշխարհի բոլոր այսօրեանեան գործութիւնները, ինչպէս և մեր հայերէն գիրքն ալ, անմիջապէս կամ միջնորդաբար ձեւակերպած են փիւնիկեան 22 տառերուն վրայէն, իսկ փիւնիկեան կոչուած այդ ալիարհուն ալ, մաքաղաթի գործածութեան հետ միասին, Սիւրիոյ հողին վրայ հնարուած բաներն: Այսպէս, գպրոցն ու գաստիւրականութիւնը և աշխարհի մտաւորական կեանքը ո՞րչափ բան կը պարտին Սիւրիոյ: Սակայն այս չէ մէնը: Այսօրուան աշխարհի երեք միաստուածեան մեծ կրօններն ալ, — Հրէական, Գրիստոնէական, և Իսլամ — կա՛մ ուղղակի Սիւրիայէն ծագում առած են և կա՛մ այս երկրը ունեցած են իրեն իրենց հաստատման և տարածման խարխիւր: Չմոռնանք որ աշխարհագրականօրէն Պաղեստինը Սիւրիոյ անբաժանելի մէկ մասն է:

Ապա նկատի առ միջին դարերու արաբական բարձր ու ծաղկեալ քաղաքակրթութիւնը, որ զիսաւոր գրգիռը տուած է տգիտութեան խաւարին մէջ քնացող Եւրոպայնարթնցնելու և մտաւորական վերածնունդը յառաջ բերելու: Մաթեմատիկ, աստեղագիտութիւն, բնագիտութիւն, քիմիաբանութիւն, վիրաբուժութիւն, բժշկութիւն, և ինչ ո՞րչափ բան կը պարտին լուսամիտ Արաբ խալիֆաներու հովանաւորութեան ու հոգածութեան ներքեւ պրած ու աշխատած գիտուններու անխոնջ ջննդութեանց ու գիւտերուն: Ծանշանանք գնահատել մշակութային այդ կարեւոր դերը, և աննախանձ հոգիով սիրենք զայն, միտք բերելով թէ հայերս ալ, զոր օրինակ չափաբերական արուեստի և երաժշտութեան մէջ, նաև բժշկութեան մէջ մասնաւորապէս, ո՞րչափ բան փոխ առած ենք թ. — Ժ. Գաբրիւն Արաբներէն:

Կ'աւելնմ վերջացնել մէկ երկուս բոպէ

ալ ձեր ուշադրութիւնը հրաւիրելով Հայոց սրբազան կոչումին վրայ: Իբրեւ քրիստոնեայ ժողովուրդ մը Հայ ազգին կոչումն է հոգեւոր ու բարոյական լոյս բերել իր միջավայրին, իր բնական երկրին ազնւիւլ: Որչափ ատեն որ հաւատարիմ մնանք մեր այս սրբազան կոչումին, վստահ եմ թէ այնչափ ատեն նախախնամութիւնը պիտի պահպանէ մեր գոյութիւնը: Վերեւ մատնանշել ջանացինք մեր գաստիարակեալ նոր սերունդին կրկնակ պարտականութիւնը՝ իր ազգին հանդէպ, նաև իրեն ասպնջականութիւն շնորհեց այս երկրին հանդէպ: Ոմանք գտնէ կարծիք թէ այս երկու տեսակէտներն անհաշտելի են յաւէտ, բայց մենք տարբեր կը խորհինք: Քանի որ ասոնց երկուքն ալ Աստուծոյ կողմէն մեզի պարտադրուած նախնական պարտականութիւններ են, որոնց օչ մին և ոչ միւսը զանց ընել ուղիղ կ'ըլլայ խղճի տէր մարդու մը համար, ուրեմն անոնք անհաշտելի չեն հապա իրարու լրա-

ցուցիչ են: Եւ մենք ճշմարիտ քրիստոնեաներ մնալով և իմաստնօրէն ապրելով պիտի կրնանք բնական կերպով և առանց շատ դժուարութեան գոհացնել երկու արդար պահանջներն ալ: Տէր Յիսուսի կեանքին սկզբունքներուն վրայ հիմնուած ներգաշնակ գաստիարակութիւն մը անշուշտ մեծապէս պիտի նպաստէ մեզի այս բանը հնարաւոր ընելու: Ուստի մեր կրթական բարձր հաստատութիւններուն մէջ ուսանող հայ պատանիներն աւ օրիորդները թող գիտնան թէ շատ կարեւոր ու վսեմ պարտականութիւն մ'ունին կատարելու: Աստուած պիտի օրհնէ ու յաջողութեամբ պսակէ մեր ջանքերը՝ եթէ անկեղծ սրտով աշխատինք մեր վեհ կոչումն իրագործելու: Հայ ապրինք, աշո, մարդկութեան մէջը, բայց նաև սիրենք մեր գրացին ճիշտ մեր անձին պէս, որպէսզի երկրին վրայ շուտով զայն Աստուծոյ թագաւորութեան խաղաղութիւնը:

(Վերջ)

Ե. Ս. ՔԱՍՈՒՆԻ

ԿՐՕՆՔ ԵՒ ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն և Վերջ)

Քրիստոնէական կրօնքի Աստուածը մարդկային իւրաքանչիւր անհատը օրհնող (հայր) մըն է: Որով՝ ազգասէրին սիրած անհատը՝ Աստուծոյ յաւիտեական սիրոյն առարկայ եղող անհատըն է:

Հետեւաբար՝ ճշմարիտ ազգասիրութիւնն Աստուծոյ հետ համագործակցութիւնն է: Մեր ազգասէրն բարեկամները յաճախ խորհած են թէ Աստուած հայ ազգին անխրտութիւն ըրած է. միշտ ջարդուած հայը աղօթած է, բայց

Աստուած զայն ազատած չէ:

Մեր ազգային աղէտներն ու պատախանատութիւնը Աստուծոյ ուրբ բեռընել մանկամտութիւնն է:

Եթէ հայ իշխաններ իրարու նախանձիւով անմիաբան եղած են եւ ներքին վէճերով իրենց ազատութիւնն են կորսնցուցած, միթէ Աստուած է պատախանատուն: Եթէ հայ յեղափոխականը Սանասորի Օսմանեան դրամատան նման ցոյցերով թիւրքին նախաձը գրգռած աւ անկոնութիւնը բոլորովա-

ուած է, ասոնք միթէ Աստուածային հրահանգով են կատարուած :

Երբեք խորհած ենք թէ ահային բանակ, տորմիդ ունեցող ազգեր 2—13 միլիոն մարդու կորուստ են ըրած : Մեծ Պատերազմի միջոցին, մեզի պէտանտէր ժողովուրդ մը եթէ բոլորովին բնաջինջ եղած չէ կրկին Աստուածային նախախնամութեան կը պարտինք :

Աստուծոյ քով բնաւ աշառութիւն չկայ : Ինչ որ Անոր նկարագրին, ծրարագրին հակառակ է՝ կը տապալի, ըլլայ Անգլիոյ, Միերիկայի, Հայաստանի կամ Թիւրքիոյ մէջ :

Աստուած Թիւրքը չի պատժեր ըսողը կարճատես ըլլալու է : Ի՞նչ եղած է Վիէնայէն մինչեւ Պարսկաստան ելկաող Օսմանեան կայսրութիւնը. ո՞ր են կարմիր Սուլթանները և իրենց հարէմները : Ինչպէ՞ս Իզմիրի մէջ Թիւրքը Թիւրքին ձեռքով կախաղան ելաւ, որոնց մէջ կը գտնուէին Հայոց ջարդարները : Ի՞նչ եղաւ Հայ կոյսը և մանկահասակ կիներ առեւանգող Քիւրտը : Ըսել թէ Աստուած Թիւրքերը չի պատժեր՝ ամուսին ճերմակ ըսելու չափ կուրաթիւն է :

Տիեզերքի հիմը սրբութիւն և արդարութիւն է, սիւնները՝ Սէր և Իրաւունք : Ով որ անոնց կը հակառակի՝ անպայման կը փշրուի հոգ չէ թէ քիչ մը ուշ :

Ահա հարցում մը. Անկրօն ազգասիրութիւն կարելի՞ է : Այո՛ :

Անկրօն ազգասէրը «ազգ» ին համար կոկորդիլոսի արցունք կը թափէ, իսկ իրականին մէջ իր անձը կը հոգայ, յաճախ բնաւ հոգ չ'ընենք թէ անհատ թոքախտաւորը, անբարոյականը, արբեցողը, խաղամուլը, ազգը՝ ներսէն կը կրծեն : Կը յիշեմ քաղաքի մը Ազգային Միութեան նախագահը՝ որ կրօնասէր մարդ մ'էր, բայց «ազգասէրները «ազգասէր» ատենապետ մը ընտրեցին որ սակայն «ազգին» աղքատներուն

որդնոած ալիւր կերցուց իր մթերանոցէն՝ ի փոխարէն նպաստ զրկուած հընչուն ոսկիներու՝ և ազգային կոկիկ գումար մը հետը տարաւ : Անկրօն ազգասէրին համար ի՛ր խումբը, ի՛ր զաղափարականը, ի՛ր ստեղծած հայրենիքը՝ կուռքն է. իր հակառակորդին պատրաստ է մահ, տէրոր, ծեծ :

Կրօնասէր ազգասէրը բոլորովին տարբեր է : Նա կը սիրէ իր ազգին անհատները, բայց չ'անհր իր դրացին : Նա կը սիրէ Հայ անհատը՝ բայց աչք չի գոցեր անոր ախալին : Անոր սէրը վերացական չէ. Նա կը սիրէ ազգին կաղը, կոյրը, հիւժախտաւորը, անգործը, անուսը, որբը և այլին : Ան՝ անբարոյիկը ուղղելու, արբեցողը փրկելու, խաղամուլը ազատելու հետամուտ կ'ըլլայ : Ան կը նկրտի կերտել ուղղամիտ, վեհանձն, հաւատարիմ, վստահելի, աստուածավախ անհատներէ բաղկացեալ ազգ մը :

Անիկայ կը սիրէ իր «ազգը» միևնայն ատեն նոյնքան փոյթ կընէ դրացի ազգերուն բարօրութեանը, առողջութեանը, կրթութեանը համար :

Կրօնասէր ազգասէրը իրականին մէջ մարդասէր մըն է : Ծառով խոտտովանելու ենք որ վերջին համաշխարհային պատերազմը ցոյց տուաւ թէ չատ քրիստոնեաներ այս ուղղութիւնէն չեղած թթու ազգայնականներ եղած էին, որոնց համար «My country right or wrong» «Իմ երկիրս՝ արդար կամ ոչ» ի սկզբունքը վերջին նշանաբան էր : Յիսուս Քրիստոսի ոգին ըմբռնող անձ մը «ազգայնամուլ» մը չի կրնար ըլլալ : Կրօնասէր ազգասէրը ունի այն հեռաւոր տեսիլը, որուն համեմատ առանց ցեղի գոյնի, դասակարգի, լեզուի խտրութեան մարդիկ պիտի ապրին իբրեւ եղբայրներ՝ սիրով ու վստահութեամբ իրարու ծառայելով : Այս թերեւ հեռու, անգործնական utopia մը երևնայ : Յիսուս Քրիստոս ճիշտ ասոր համար եկաւ, որ

պէսզի մարդիկ նոյն փաբախին մէջ
«մէկ հօտ և մէկ հովիւ» ըլլան:

Ահաւասիկ ազգասիրութիւն մը որ
ամէնէն առաջ «ազգ»ը ներքնապէս կը բ-
ծող ու փնտցնող բարոյական ախտէն
ու գերութենէն ազատել կը տենչայ:

Այսպիսի ազգասիրութեան մը տի-
պար օրինակն է Նազովրեցի Յիսուսը,
որ թէպէտ նախ Իսթայէլի օչխարներուն
եկած էր եւ «Երուսաղէմ» ապագայ
կործանումին վրայ լացաւ, բայց «չուն»
նկատուած գրացի Սամարացիին հոգ-
ւոյն դարձան եղաւ, իշխող պետու-
թեան հարիւրապետին «հաւատքը» զո-

վեց ու գնահատեց:

Յիսուս իր ազգը սիրեց բայց ճշմար-
տութիւնը աւելի սիրեց: Մենք կոչ-
ուած ենք Յիսուս Քրիստոսի նման ազ-
գասէրներ ըլլալու:

Յիսուս մեծագոյն ազգասէրն էր՝ ու-
րովհետեւ եզական մարդասէրն էր: Յի-
սուս գերագոյն ազգասէրը և մարդասէրն
էր՝ ինչու որ գերազանցօրէն Աստուա-
ծասէր էր:

Ազգասիրութեան ազդիւրը Աստուած
է՝ որմէ կրնանք սորվիլ սիրելու ար-
ուեստը:

Հայկա

Յ. ԶԱԳՄԱԳՃԵԱՆ

ԻՆՉՊԷՍ ԳՐՈՒԵՅԱՆ ՄԵՐ ՍՐԲԱՋԱՆ ԵՐԳԵՐԸ

«Այ մօտ ըլլամ ով Տէր»: Հոգ. Երգ. 79, Թրք. Երգարան 106:

Այս երգի հեղինակը Տիկ. Ս. Ֆ. Ադամս (Mrs. S. F. Adams) միագաւան
մըն էր: Շատերու կողմէ առաքելուած
է թէ այս երգը երգարաններու մէջ զըր-
ուելու չէ, քանզի անոր մէջ Յիսուսի
անունը անգամ մը իսկ չէ յիշուած:
Թէեւ շատեր այս պակասը լեցնելու հա-
մար երգին հոգիին համեմատ օգրիչ հա-
մարներ գրելու ձեռնարկը ըրած են,
սակայն տնոնք քիչ յաջողած են, եւ ո՛չ
ալ գրուածները ուրիշներու կողմէ ըն-
դունուած է: Այս երգը Միագաւանի
մը կողմէ գրուելով հանդերձ, դեռ շա-
տերուն կողմէ սիրուած եւ ամէնուն
սրտին խօսող երգ մըն է:

Կը պատմուի թէ ասկէ տարիներ
առաջ պղտիկ աղջիկ մը կը հիւանդա-
նայ, եւ այս հիւանդութիւնը այնքան
յառաջ կ'երթայ որ, նա նոյնիսկ իր աչ-
քերուն կ'ազդէ: Բժիշկները կը պատ-
ուիրեն որ գինք բոլորովին մութ սեն-

եակի մը մէջը դնեն, վախճալով թէ մի-
գուցէ լոյսը անոր աչքերուն կ'օրոտեան
պատճառ կ'ըլլայ: Նա հաւատալ չեր
ուզեր որ այսքան պակուցիչ աղէտ մը
իրեն կրնայ հանգիպիլ: Կիրակի առա-
ւօտ մը նա ինքնիրեն կ'ըսէ: «Ս. Գիր-
քը կ'ըսէ թէ մենք մեր կարողութենէն
աւելի պիտի չփորձուինք: Ես այս
փորձութիւնը չեմ կրնար կրել: Ո՛հ,
ո՛չ, ես կոյր պիտի չըլլամ: Մինչ նա
այս խօսքերով կը մխիթարէր, ահա
դուրսէն իր պղտիկ քրոջ մեղմ եւ ա-
նուշ ձայնը կը լսուի, որ կ'ըսէ. «Քոյր,
կրնամ ներս գալ»: «Այո» կը պատա-
խանէ հիւանդը: «Գիրք», քոյր, կ'ը-
սէ պղտիկ քոյրը, ես քեզի «Ալ մօտ
ըլլամ ով Տէր» երգին խօսքերը կարդա-
լու եկայ»: «Հաւո կը պատառախանէ հի-
ւանդը, և կրնաս կարդալ, քեզի արդեւ
չեմ հանդիսանար: Պղտիկ քոյրը անուշ
ձայնով մը կը կարդայ:

«Ալ մօտ ըլլամ, ո՛վ Տէր,

Ալ մօտ քեզի,

Թէ՛ք ճամբան ըլլայ,
Դառնայ ցաւալիս
Միշտ ազօթեմ պիտի,
Ալ մօտ ըլլամ քեզի
Այլ մօտ քեզի»

«Ո՛չ, ա՛յ, այս երգը ինծի համար
չէ» կը պատասխանէ հիւանդը, «ես
չեմ կրնար հասկնալ թէ՛ այս իմ դառն
ու ցաւալի ճամբան ինչպէս գիտ և ու-
սումայ մօտ պիտի տանի»։ Պզտիկ
աղջիկը կը շարունակէ։

«Քուէնէս ելած ես Գեզ
Պիտի գովեմ,
Ու դառն վիշտէս Բեթէլ
Պիտի շինեմ.
Որ տառապանքներս վս
Այլ մօտ ըլլամ քեզի,
Ալ մօտ քեզի»

«Լաւ, լմնցուր երգդ» կը պատաս-
խանէ հիւանդը։

Երբոր պզտիկ աղջիկը երգին խօսքե-
րը կաթողալը կը լմնցնէ, հիւանդը իր նի-
հար և հիւանդ ձեռքերը վեր կը բարձ-
րացնէ, կարծես տառապանքի բաժակը
իր դեղնած շրթներէն հեռու պահելու
համար։ Կ'անցնին օրեր։ Թէ՛ք իր մար-
մինը օր քան օրէ կը զօրանայ, սակայն
տէքի տկարութիւնը երթալով կը սաստ-
կանայ։ Նա այլևս ա՛յ իր յոյսերուն և
ո՛չ ալ իր վախերուն վրայով քան մը կը
խօսի։ Նա լուռ ու մօռնջ նստած, կար-
ծեա իր հոնքաւոր խաչը կրկնու կը
պատրաստուի։ Թէ՛ք ճամբան մութ կը
տեսնէ, սակայն հեռուն, մշուշով մէջէն
կը նշմարէ լուսոյ նշոյլ մը որ զինք առ
Առտուած կ'առաջնորդէ։

Օր մը նա կ'աղաղակէ։ «Մայր, այլևս
համբերութիւնս հատաւ։ Բա՛ց պատու-
հանը, և թող լոյսը ազատօրէն նեխ
թափանցէ, քանզի այս խաւարը ալ չեմ
կրնար տանիլ»։ «Բիշ մը եւս համբե-

րէ, աղջիկ» կը պատասխանէ մայրը,
«կէսօրուան արեւին լոյսը շատ զօրաւոր
է։ Կը խոտառամ վաղը առաւօտը պա-
տուհանը բանալ, քրպէսդի նոր ծագող
արեւին լոյսը բոլոր սենեակը լեցնէն»
Հիւանդը համբերութեամբ կը սպասէ։
Նա միշտ կ'աղօթէ որ գիշերը շուտ
անցնի, և ինք տառաւոտան լոյսը դի-
մաւորէ։ Վերջապէս արշալոյսը կը
ծագի։ «Մայր», կ'ըսէ հիւանդը, «պա-
տուհանի» փեղկերը լաւ բաց, և նայէ
թիւ արեւին լոյսը բոլոր սենեակէ ողողէ,
և ապա եկեւր և աչքերուս վրայի վի-
րապապերը վերցուր»

Հիւանդը պատուհանին եղած կողմը
կը դառնայ։ Իր մերկ բազուկներուն
վրայ արեւին տաք թաթիւնն և առաւօտ-
եան զեփիւռը կը զգայ, սակայն աչքե-
րը չեն տեսներ։

«Մայր, «Իրեւի մայր», կ'ըսէ հիւան-
դը, «ինչո՞ւ համար լուռ կը կենաս։ Մի-
թէ սենեակին մէջ լոյս չկայ որ աչքե-
րը չեն տեսներ»։ Մայրը քաղցր սա-
կայն վշտալից ձայնով մը կը պատաս-
խանէ։ «Սիրելիս, արեւը ճիշտ քու վը-
րագ կը փայլի»։

Հիւանդը մօէն բան կը հասկնայ, և
անմիջապէս հեծկլտալով ծունկի վրայ
կուգայ, իր ձեռքերը դէպ ի երկինք
վերցուցած, կարծես անձեռնհաս իրան
մը բռնելու համար։ Վշտահար մայրը,
արտասուելից աչքերով, իր սրտահա-
տորին դէմքին վրայանօր կրած վշտին
վեհութիւնն ու խորութիւնը կը կար-
դայ, և առանց ձայնի ծնրադրած աղջը-
կանը մօտենալով անոր թօշնած շրթե-
րէն ելած սա աւաչը կը լսէ։

«Որ տառապանքներովս,
Այլ մօտ ըլլամ քեզի,
Ալ մօտ քեզի»

«Իմ քովս կեցիր, գիշերն կը մօտե-
նայ» Հ. Ե. 44։ Թ. Ե. 167։

Պարագաները՝ որոնց տակ այս երգը գրուած է, շատ տխուր են: Այս երգին հեղինակը, Վեր. Հ. Ֆ. Լիթ (Lyte), Անգլիոյ Պրիքսհամի (Brixham) ծովային ժողովուրդի մը հովիւն ու ժողովրդագետն էլ լուրով, իր պատկերներուն, իր երկերն անվեհեր ձկնորսներուն, և իրեն պէս հիւսնողութենէ տառապողներուն համար շատ մը երգեր յօրինած է: Նա մարմնով շատ տկար ըլլալուն համար հարաւային կողմերը գաղթելու համար երկար ճամբորդութեան մը որոշումը կուտայ: Այս ճամբորդութեան մասին նա այսպէս կ'արտայայտուի. «Թէ և ես թուշեղու մասին կը խօսիմ, սակայն զրտեմ որ, հագիւ թէ սողալու կտրող եմ, և ինքնիրենս կը հարցնեմ, «Արդեօք Անգլիան ձգելու կարող պիտի ըլլամ»:

Բաժնունիլէ առաջ, նա վերջին անգամ ըլլալով հազորդութեան պաշտամունքոյ մը կատարելու համար իր սիրեցեակ ժողովուրդին հետ ի մի կուպայ, որմէ յետոյ բաժանման մի քանի խօսքեր կը խօսի: Այս պաշտամունքէն անմիջապէս վերջը՝ նա իր առանձնատենեակը կը քաշուի, ուր երկար ժամանակ կը մնայ: Նոյն երեկոյին, նա այս երգին խօսքերը իր ազգականներէն մէկուն կուտայ, որով անտարակոյս այդ կիրակի օրուան վերջալոյսին գրուած ըլլալու է: Այս երգը իր կեանքին մի կատարեալ պատկերացումն է: «Գիշերը կը մօտենայ, խաւարը կը թանձրաբանայ—չուտով կենաց օրերն կը վախճանին»: Նա գետ իր ճամբորդութիւնը ի զուլիս չհանած ֆրանսայի Նիս քաղաքը կը մեռնի:

1887ին Անգլիոյ թերթերէն մին, իր ընթերցողներուն սորոնք են էն գեղեցիկ հարիւր երգերը՝ հարցումը կ'ուղղէ: Ստացուած շուրջ 3,500 պատասխաններէն կը տեսնուի թէ այս երգը երկրորդ տեղը կը գրաւէ, նախապատ-

ածութիւնը ձկնորսի փրկիչ ֆրիստատայ 2-6-96-10-6-212, երգին տալով:

Ֆիլատելֆիացի Վեր. Ճ. Տ. Պէյքըր (Baker) Նիս քաղաքը գտնուած միջոցին այս երգին հեղինակին գերեզմանը տեսնել կը փափարի: Երբոր գերեզմաննոց կը մտնէ, հանգուցեալին շիրմին վրայ երիտասարդի մը լալը կը տեսնէ, որ այս երգին խօսքերէն ազդուելով ֆրիստոտի եկած է:

Կը պատմուի թէ անգամ մը երիտասարդ աղայ մը իր հայրենի քաղաքը ձգելով Նիս Եորք քաղաքը կուպայ, ուր փորձութեանց մէջ յոյնալով, փճացման ճամբան ձեռք կ'առնէ: Իրիկուն մը, իր անտակ ընկերներուն միանալու համար փողոցէ մը անցած միջոցին, երգի մը ձայնը կը լսէ, որը իր ուշադրութիւնը կը գրաւէ:

«Իմ քովս կեցիր,

Գիշերն կը մօտենայ,

Տէր, քովս կեցիր,

Խաւարն կը թանձրանայ»:

Երիտասարդը անմիջապէս կը կուտայ, կարծես Աստուծոյ ձեռքը զինք կը ձիւրակալէ: Այս երգին խօսքերը, իր մօրը ամէն իրիկուն զինք անկողին դրած միջոցին իրեն համար երգած երգին խօսքերը ըլլալը կը հասկնայ: Այդ վայրկեանին իր մօրը պատահելով, և մանկութեան բոլոր անուշիշատակները զերթ հեղեղներ իր միտքն ու հոգին կ'ազդեն: Նա անմիջապէս հտ կը դառնայ, և երգի ձայնին եկած կողմը ուղղուելով, եկեղեցին կը մտնէ: Ներս մտածին պէս տարբեր բարեկամներով շրջապատուելով, անկողնի ֆրիստոտեայ մը կը գտնայ:

Պէյքըր

Ճ. Տ. Մկրտիչեան

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԱՓՐԻԿԷԻ մէջ փրկեր կ'ապրին որոնց իւրաքանչիւր ժանիքը 70 հոգա (2000 փառնետ)է աւելի կը կշռէ:

ՄԱՐԴԿԱՅԻՆ մարմնոյն կրիւն 99 առ հարիւրը սակորնեբուն եւ ազատներուն մէջ կը գտնուի. իսկ մնացեալ մէկ հարիւրերորդ մասը որպէս լուծելի աղ մարմնոյն տարբեր հեղուկներուն և հիւսկէններուն մէջ կը գտնուի:

ԱՌԱՋԻՆ անգամ ըլլալով հնաբանները կ'ուզեն հաւատալ թէ՛ իրօք իրենք երեւան հանած են Հիւքս թագաւորի մը, այսինքն Եգիպտոսի հովիւ թագաւորներէ մէկու մը պատկեր մը, քի մօտաւորապէս ասկէ 3700 տարիներ առաջ ամբողջ եգիպտական պատմութեան մէջ նոր դարաշրջան մը կերտեցին: Հիքսոսները արեւելքէն եկած ժողովուրդ մըն էին, որոնք իրենց առողջ նոյններովը, գէնքերով և ազնոյներով Եգիպտոսի վրայ յարձակեցան, երկիրը աւերեցին և թագաւորները ըսպաններով անոնց տեղ դարեր շարունակ լիչխեցին:

Արձանիկը թէչէլ Աճճիւլ կոչուած Պաղեստինի հարաւային կողմը կապանշանաւոր քաղաքին մէջ գտնուեցաւ:

Այս արձանիկը ո՛չ Խեղաքիներու (հիթիթ), ոչ Ամորհացիներուն, ո՛չ Սեմական ցեղին և ոչ ալ այն ժամանակ ապրող ուրիշ ցեղի մը նմանութիւնը կը կրէ: Իր տեսակին մէջ մի միայն մէկ հատ է ան, որով կը կարծուի թէ խորհրդաւոր Հիւքսոսներէն մէկը կրնայ ըլլալ:

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ մետաքսը, որ Ընդ. Պատերազմէն իվեր աշխարհի բոլոր մասերուն մէջ կը գործածուի, չի կրեր այն յատկութիւնները զորո իրական մետաքսը ունի: Սակայն հիմա ոչ միայն արուեստական մետաքս այլ նաև իրական

մետաքս, այսինքն շերամին շինած մետաքսը գիտուններ կրցան յօրինել:

Այս մետաքսը արուեստական մետաքսին պէս կը շինուի նախ մանրաթելերու վերածուելով: Ջայն արտադրելու համար նախ շերամին բժոժը (խոզակ) մետաքսեայ նիւրդային լուծարկութեան մը կը վերածուի, ճիշտ շերամին փորը գտնուող մետաքս պատրաստող հեղուկին պէս: Ասիկա իրական մետաքսի լուծարկութիւն մըն է: Այս կէտէն վերջ գործողութիւնը կը կատարուի այնպէս ինչպէս արուեստական մետաքսը կը պատրաստուի: Շերամի լուծարկութիւնը թելերու կը վերածուի զայն շատ փոքր և նեղ ծակերէ անցեցելով:

Շերամէն արուեստական մետաքսի արտադրութեան գործին մէջ ճարտնչիք կատարելագործեցին: Բայց ճարտնչական կառավարութիւնը այս գործին արգելք կը հանգիստանայ, շուկային հասցնելիք վճարին համար: Ամերիկացի և Եւրոպայի հնարիչները պիտի շարունակեն, զայն արտադրել:

92 ՏԱՐԻՆԻՆ ռմանք շատ հազոնագիւտ են, և ռմանք շատ տարածքաւոր են: Բէնիլըմ կոչուած հազոնագիւտ տարրը, որ 1926ին գտնուեցաւ գերման ամուլի մը կողմէ (այր մը ե իր կինը), այժմ ամէն տարի Գերմանիոյ մէջ գտնուած պղինձի հանքէն 300 լիպրա պիտի արտադրուի: Այս նիւթին մէկ լիպրան 1600 տոլար կ'արժէ:

Քաղեց՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ԴԷՊ Ի ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Մեծ զարմանք մըն է անշուշտ՝ Ամերիկայի շինական դասակարգին՝ վաճառականական հնօրեայ մեթոտին յետադարձումը և զիւղական ժողովուրդին այս եղանակէն օգտուելու պարագան՝

Ներկայ զարգացած դարու մը մէջ: Բայց Միացեալ Նահանգաց գիւղացիներու տտաւար մեծամասնութեան այս մեթոտին գործադրութեան շարժառիթները երբ նկատի ունենանք կապած չկայ թէ, մեր զարմանքը պիտի փափատի:

Այսօր յոյժ արդիւնաւոր տնտեսական մարզեր թոյլ և չփօթ դրութիւններու մատնուած են. շուկաներու մէջ ապրանքներու խճողումը, գործաբաններու գերատագրութիւնը, գրամի նուազումը հաստատուած և տրամաբանական հիմ կ'ընծայեն՝ վաճառականական նախնական մեթոտին ի գործ դրողներուն, որ մարդերն առևտրական աննենգ փոխ-յարաբերութեան աղիւն առջնորդելու մեծ ակնկալութիւններով յղի է:

Տնտեսագէտներ կը հաւաստեն թէ Մ. Նահանգաց մէջ 1928 էն ցայսօր 3,000 միլիոն տոլար նուազած է գիւղերը մտած դրամին քանակէն: Անշուշտ ակնյայտ է որ այս պարագան ալ գիւղացիները պիտի մղէ իրենց նիւթակտն անձկութիւնը դարմանող միջոցը ապահովելու, որ է ապրանքներու աղողակի փոխանակութիւնը:

Պէտք է ընդունինք թէ փոխանակութիւնը իր բացայայտ առաւելութիւններն ունի: Այս կերպով անպէտ փոխադրութեան ծախքեր, միջնորդներու և ծանուցումներու ծախքեր արմատախիլ պիտի բառնան և աղքատ դասակարգին կացութիւնը պիտի մեղմանայ իր հողին բերքը դրացիներուն բերքին հետ կամ ապրանքին հետ փոխանակելու հաւասար պատեհութիւնը ունենալով:

Հետեւաբար հնօրեայ վաճառականական մեթոտին վերերեւումը ճշմարիտ, անկեղծ բողոք մըն է սոսկ արուեստական առևտրական մեթոտներու դէմ, որոնք մեծապէս կը կարօտին ա-

ԼԱԹԱՔԻԱ

Լաթաքիա՝ նոյնանուն պետութեան, կամ հին յորշորջումով Ալավի-նիրու անկախ երկրին, մայրաքաղաքն է: Այս ինքնավար հողամասը ուղղակի կապուած է Բ. Գոմիսէթեան, եւ կը կառավարուի ֆրանսացի ընդհանուր կառավարիչով մը: Բաժնուած է երկու սանճագներու-Լաթաքիա և Թարթուս— և 7 գաւառներու (Գազա): 1929 ի մարդահամարին համաձայն բոլոր երկրին բնակչութիւնն է 291 հազար և հիմա 300 հազարի մօտ կը հաշուեն, ինչպէս որ մեզի կը յայտնէր Լաթաքիոյ կառավարիչը: Միջանկեալ ըսենք որ ազնււասիրտ մութասարըֆը, որ Կիլիկիցի Ալավի մըն է, մօտէն չփուռ ունեցած է հայ կիանքին հետ, կը ճանչնայ Կիլիկիոյ ականաւոր հայերը անձամբ, սորված է Հայերէն եւ օգնած է շատերուն, ինչպէս որ իրմէ հասկըցանք իրեն հետ ունեցած մեր մէկ ժամուայ տեսակցութեան առթիւ: Լաթաքիա հաստատուած հայերն ալ երախտագիտութեամբ եւ յաջգանքով կը յիշեն իրենց բարեկամ կառավարիչը:

Լաթաքիոյ ներկայ բնակչութիւնն է 27,000, օրուն մէկ երբորդը, 9000ը, քրիստոնեաներ են: Հրեայ չկայ: Հայերուն թիւն է 1240 անձ եւ կամ 300 ընտանիք:

Լաթաքիա Արեւելքի հին քաղաքներէն է: Սելեւկոս Նիկատոր զայն վերականգնեց եւ կոչեց Լաուդիկէ: Հռովմայեցիք զայն կոչեցին Յուլիա: Հիւնէի վեր զարգացեալ բարգաւաճ քաղաք մը եղած է, բայց Սաչակիրներու իշխանութեան անկումէն ետքը ինքն ալ

ւելի պարզ դրութեան մը:

Ամերիկայի 2,600 գաւառներու մէջ այս հղանակ առևտուրի վերակած են:

Թ. ՊԱԼԵՕԶԵԱՆ

սկսած է իյնալ ծ Հագիւ կրցած է ժէ. դարուն մէջ վերակենդանութեան նըշաններ ցոյց տալ, և սկսած է կամօց կամաց զարգանալ: 1822 ին պատահած երկրաշարժ մը բաւական վնաս հասցեցած է: Լաթաքիայէն Համա շինուած ճամբան քաղաքին զարգացման մեծապէս օգնած է, կապելով զայն Սիւրիոյ կարհերու մանաւանդ հիւսիսային մասին: Սակայն Համա Հոմա գիծը զայն դարձեալ որոշ չափով աննշան գիրքի մատնած է:

Իր հարստութեան աղբիւրներն են ծխախոտը, շերամը, ձէթը, հաւեղէն և սպունգ: Լաթաքիոյ ծխախոտը հոչակ հանած է եգիպտական և եւրօպական հրապարակներու վրայ. պէտք է ըսել որ Քէօպի շրջանին մէջ Գալատուրան՝ ծովեզերեայ հայ գիւղը կարհեր բաժին մ'ունի այս հոչակին մէջ: Լաթաքիոյ ինքնավար կառավարութիւնը մինչև 1930 ի վերջը կրցած է իր հիւմատացոյցը հաւասարակշռել և նոյնիսկ գանձին մէջ աւելորդ գումար մ'ունենալ: Բայց ներկայ տալնապի պատճառաւ վերջին երկու տարուան միջոցին պիտե՛ն բաց մնացած է:

Ալավիները, որոնք երկրին ընդհանուր բնակչութեան տոկոսը մեծամասնութիւնը կը կազմեն, միշտ ենթակայ եղած են կեղեքութիւն և անիրաւութեան և ստրուկի պէս ծառայած են սիւննի խաւամանաւանդ թուրք աղաներուն: Յրանաական գրաւումով այս վիճակին վերջ մը տրուած է, և այս պարագան անմոռաց պահելու համար ծովեզերքը՝ հանրային պարտէզի մէջ՝ կոթող մը կանգնուած է, որուն վրայ գրուած է հետեւեալը. «Ի յիշատակ Ալավիներու փրկիչ ֆրանսական զիւղորենքուն»:

Քաղաքը վերջին տասը տարիներու միջոցին մեծապէս բարեկարգուած և զարգացած է: Հիւսիսէն հարաւ և արեւելքէն արեւմուտք երկաթուղ և քա-

ղաքին ճիշտ կեդրոնը զիրար խաչածեւոյ երկու նոր ասֆալթով ծածկուած պողոտաները քաղաքը չորս մասերու կը բաժնեն: Շատ մը հանրային և անհատական նոր շէնքեր շինուած են, որոնք քաղաքը բոլորովին կերպարանափոխած են: Շինարարութեան կարեւոր մէկ ձեռնարկը եղած է նաւահանգիստին հիմնովին նորոգումը, որ սակայն կիսաւարտ մնացած է:

Լաթաքիոյ երկրին մէջ կատարեալ անդորրութիւն և ապահովութիւն կը տիրէ: Սուրիոյ քաղաքական խնդիրները, սահմանային հարցերը, ֆրանսացի տեղացիի, արաբի հայու խնդիրներ չկան: Կարեւորագոյն խնդիրը տնտեսական տագնապն է, որմէ առաւելապէս կը տուժեն գործաւոր հայերը և Արուստական մետաքսը սպաննած է շերամարածութիւնը, ծխախոտը և ձէթը պէտք եղած դրամական շահը չեն ապահոված: Երկիրը դրամ քաշելու համար կառավարութիւնը այս տարի ձեռնարկած է գեղեցիկ ամառանոց մը շինելու իսլէնֆէ կոչուած վայրը, քաղաքէն 75 քիլոմէթր հեռու 1500 մէթր բարձրութեամբ տեղ մը, ուր շինուած է գեղեցիկ պանդոկ և անձնական շէնքեր: Լաթաքիան զատ ուրիշ տեղերէ և մարդիկ հոս եկած են ամառը անցնելու համար:

Լաթաքիոյ բնիկ հայութիւնը շատ փոքր թիւ մը կը կազմէ, քրուն մէկ մեծ մասը Լաթաքիոյ երկու հայաբնակ Արաւոյ և Գընէի գիւղերէն եկած են: Հայութեան կէսը 147 ընտանիք կը բնակին հայոց վանքին պատկանող և վանքին կից գետնին վրայ—տախտակաշէն հիւղերու մէջ—ուր աղքատութիւնը, թրշուռութիւնը, առողջութեան հակառակ պայմանները, խրճիթներէ չափազանք իրարու մօտիկութիւնը, բնակիչներու վատառողջ և տկար մարմինները շատ տխուր տպաւորութիւն մը կը ձգեն զի-

տողին վրայ: Քէմիի հայ մուխթարին ըսածին համեմատ անտեսական տաղ-նապի պատճառաւ քաղաքէն տասը նոր ընտանիքներ քէմի փոխադրուած են, և 12 ընտանիքներ անգործութեան պատճառաւ Պէյրութ զաղթած են:

Քաղաքին մէջ լաւ գիրքի տէր հայեր անպակաս են: Լաթաքի փոստատան ընդհանուր քննիչն է Տիար Տակոբ Տէր Յակոբեան, բնիկ մարաշցի, Սուրիական Դրամատան կարևոր պաշտօնեաներէն է Տիար Յարութիւն Աշըգեան, բնիկ Այնթապցի: Ատամնարոյժ Տիար Սեդրակ Պաղչէնեան, Ատանայէն, ժողովուրդէն սիրուած և յարգուած ազգեցիկ անձնաւորութիւն մ'է: Կան ուրիշ ատամնարոյժներ, գեղազոր, բըժիշկ, մանր վաճառականներ, յանձնառուներ, բարհաստաւորներ, որոնց մեծ մասը կը գանգատին տաքնապէն:

Հայերը ունին դպրոց մը վանքին մէջ 300 աշակերտներով: Ցաւալի է որ անհամաձայնութեան մը պատճառաւ խմբակ մը դատ դպրոց մը բացած է ուր յաճախած են մօտ 60 աշակերտներ: Այս տարի կ'երեւի թէ անջատուողները չկարենալով պիւտճէն հաւասարակը՝ ունի, դատ դպրոց չպիտի կրնան ունենալ, ինչպէս որ կը յուսային ազգային դպրոցի վարիչները: Հայ կաթողիկոսները, աւելի լաւ է ըսել Հայ Լատինները, թիւով 67 հոգի, և բոլորն ալ էքզէզցի, իրենց զաւակները կը զրկեն Լատին դպրոցը: Լատինները աւարտելու մօտ փն 24 հազար օսմ. ոսկի (մետաղ) արժողութեամբ եկեղեցիի նոր շէնք մը, 30 երկ. 27 լայն. և 16 բարձ. մէքր ծաւալով, որուն քովը բնակութիւն հաստատած են Հայ Լատինները:

Հայ Աւետ. փոքրաթիւ համայնքը իր մանուկները կը զրկէ Հայ Ազգ. Վարժարանը և Երիցական միախոնարութեան դպրոցը: Հայ աւետարանականները իրենց կրօնական հաւաքոյթները

կը կատարեն Երիցական միախոնարութեան կողմէ իրենց տրամադրուած սրահի մը մէջ, ուր աղօթածողովներուն 30 և կիրականօրեայ պաշտամունքներուն 60ի մօտ անձեր ներկայ կը գտնուին, իբր քարոզիչ կը գործէ Տիար Վարդան Քէօթէքեան, որ անխտիր բոլոր հայերէն սիրուած է: Արաքսիս երիցական ժողովուրդին մէկ կարևոր մասը հայեր են, մեծ մասամբ Դընէիցի, որոնք կը գործածեն թէ՛ արաբերէնը և թէ՛ իրենց ուրոյն հայերէն բարբաղը: Տ. Ճ. Խ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ագարակապանին արտադրած ցորենին իւրաքանչիւր պուշըը իրեն արժած է 61 սէնթ, և ծախած է 47 սէնթի:

ԵՐԿՈՒ ՄԻԼԻՈՆԷՆ աւելի 10-17 տարեկան մանուկներ իբր բանաւոր աշխատած են 1930ի միջոցին:

Մ. ՆԱՀԱՆԳԱՅ գրադարանները տարեկան 19 միլիոն տոլար կը ոպառւին նոր գիրքերու և թերթերու: Այս տարի այդ գումարը եղած է 14 միլիոն 260 հազար:

ԱՆՏԵԱԼ տարի Մ. Նահանգաց մէջ մանուկներ 60 միլիոն տոլարէն աւելի գրամ ծախսած են շաքարեղէնի համար:

ՔԱՆԱՏԱՅԻ նպաստաբաշխ կոմիտէն ծրագրած է 1) մուրացկանութեան ջլնջումը, 2) նպաստի փոխարէն պարտադրեալ գործ, 3) անհայրենիք թափառական անգործներու արգելափակումը ագարակներու մէջ: Այս ծրագիրը հաստատուած է կառավարութեան կողմէ:

ԱՄԱՌՈՒԱՆ սկիզբը 14 միլիոն թօնօ տարողութեամբ վաճառականական իսահեր անգործ էին. ասոր մէկ չորրորդը կը պատկանի Մ. Նահանգաց: Գերման կառավարութիւնը 400000 թօնօ տարող

ղութեամբ վաճառականական նաւերու վըստը գոցելու կ'օգնէ։ Ճրանսական նաւային գիծերը կը գործեն կառավարական փոխադրութեան շնորհիւ։ Իտալիոյ բոլոր մեծ նաւային գիծերը չորսի վերածուած են կառավարական հովանաւորութեան տակ։

ԱՆԳԼԻՈՅ, Ճրանսայի, Գերմանիոյ, Զուիցերիոյ, Զելս-Օլավաքիոյ և Մ. Նահանգաց մէջ ռազմաթերքի ճարտարաւեցտն է որ միայն բարգաւաճ վիճակ մ'ունի, իր գործաւորներուն թիւը կ'աւելցնէ և գործառնութիւնները կ'ընդարձակէ։ Այս ճարտարարուեստով զբաղող ընկերութիւնները մեծ ազդեցութիւն ունին դրամատաւներու և քաղաքական շրջանակներու մէջ։

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ՅՐԷՋՆՈՅԷՆ (Մ. Նահանգներ) մեղի կը դրուի

ԲՈՊԵՐԹ ԱՐԱՄ, Երրորդ որդին Վեր. և Տիկ. Մ. Կ. Փափազեանի, մեռաւ ի Յրէզնօ, Քալիֆորնիա, Սեպտեմբեր 22 (1932) Հինգշաբթի օր, կուրաղիի հիւանդութեան (appendicitis) համար կատարուած վիրաբուժական գործողութիւնէ մը երկու օր յետոյ։

Բոպերթ՝ քաջառողջ մարմինով, սուր մտքով, և յոյժ առատաձեռն բնաւորութեամբ օժտուած երիտասարդ մըն էր։

Ծնած էր Այնթապ 1901 Յունիս 16ին։

Հոգ Կ. Թ. Գոլէճի գերեզմանատան մէջ կը պառկի մարմինը իր երէց եղբոր, Յովհաննէս Ուիլիի, որ մեռաւ 1898 Դեկտեմբեր 10ին։

ՊԵՅԼԱՆԻ երեք յարանուանութեանց դպրոցները կրկին միացան, ունենալով «Միացեալ Հայ Վարժարան» անունը։ Առայժմ ունին 90 աշակերտներ և դիւն 30—40 ժողովուրդ՝ Գալիքներ։ Ուսուցչական կազմը 4 հոգիէ կը բաղկանայ։

Նախակրթարանի համար 3 ուսուցիչ, հինգ կարգերով, իսկ մանկապարտէզի մէջ կին մը։ Խառն հոգաբարձութիւնը լծուած է աշխատանքի։ Բոլոր ժողովուրդը գոհ է այս միացումէ։

Յ. ԿԻՒՐԼԷՔԵԱՆ

Հ. ԲԱՐԵԴՈՐԾԱԿԱՆ Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՅՆԵՐԷՆ.—

ՄԿՐՏԻՉ Պալեան 500 աւել. ռակի կտակած է Միութեան։

ՃԱՆԿԻՅԱՆ կտակադրամէն 183649 Փր. իբք առաջին գանձում ստացած է, ինչպէս նաև ողբ. Գասպար Աճէմեանի կեանքի ապահովագրութեան գումարը 1000 տոլար։

ՎՍԵՄ. Տիար Գաբրիէլ Նորատունկեանի ծննդեան 80րդ տարեդարձին առթիւ, Նոյ. 6, 60 տարիէ ի մեր ազգին և Միութեան մատուցած մեծ ծառայութիւններուն ի գնահատութիւն յորեկեանական հանդիսակատարութիւն ընել արշուած է։

ՆՈՒՊԱՐԱՇԷՆԻ մէջ շինուած են 22 միայրականի շէնքեր, աւել մէկը 2-3 յարկաբաժինով, կիսաւարտ են 8 շէնքեր, կը շինուի երկյարկանի վարժարան մը, կը ձեռնարկուի գորգի գործարանի մը շինութեան, պիտի հիմնուի ջուլհականոց մը 10000 մէթր ջուրի խողովակները Գերմանիայէ ճամբայ հանուած են, Ղաերու ջրանցքին բացումով Նուպարաշէնի 1000 հէքթար հողերը կ'ոռոգուին։ 2-3 ամիսէն կերպարանք պիտի աւնեն հայրենակցական թաղամասերը. (Նոր Զեզուշ, Նոր Թիկատին, Նոր Հապուսի, Նոր Ակն և Նոր Հաճըն)։ 400 նորեկ պաշտականներ հաստատուած են, որոնց թիւը մինչև ձմեռ կը յանգի 1000ի և յառաջիկայ տարի ալ 3-4000ի։ Մոսկուայի կառավարութիւնը տրամադրած է մեծաքանակ շինուածանիւթ և ելեկտրական մթէօրներ, 7 թրաքթօր, 8 բեռնա-

տար օթօներ, 25 վական ալիւր, 40 թօն շաքար, 1 թօն թէյ, 2 վական կտակեղէն և հազուատեղէն: Հ. Բ. Ը. Միութիւնը Նուպարաշէնի հաշույն Հայ կառավարութեան ղրկած է 8138 տողար և 5000 անգլ. սսկի:

ՏԻԱՐ Լ. ԲԱՇԱԼԵԱՆ, որ Ազգերու ժողովին մէջ գաղթականներու Նանսէնեան Միջազգային Պաշտօնատան Վարչական խորհուրդին անդամ է իբր Հ. Ը. Միութեան պատուիրակը, կը տեղեկագրէ թէ «Ազգերու ժողովը իր ներկայ նստաշրջանին մէջ յատուկ ուշադրութեան առարկայ ըրած է Հայ գաղթականներու վիճակը, և քուէարկած է կարգ մը առաջադիւններ և թաղեանքներ խորտ Սէսիլի տեղեկագրութեան վրայ» Ատոնցմէ կարեորագոյնն է 20000 Հայ գաղթականներու Հայաստան փոխադրութիւնը, «Թր կը կարօտի դրամական լայն միջոցներու, որոնցմով պիտի գրաւի Վարչական Խորհուրդը Հոկ. 28ին, մասնակցութեամբ Տիար Լ. Բաշալեանի»:

«Գալով Սուրիոյ Հայ գաղթականներու տեղաւորման գործին, որ մինչեւ 1933ի վերջը Ազգերու Ընկերակցութեան հովանաւորութեան ներքե պիտի փայ, Ընդհանուր ժողովին մէկ որոշումին համեմատ յոյս կը յայտնուի թէ գոհացուցիչ կարգադրութիւն մը տեղի պիտի ունենայ ընդհուպ գաղթականներու պաշտօնատան և հոգատար պետութեան միջև, այդ թուականէն յետոյ Սուրիոյ Հայ գաղթականներուն տրուելիք աջակցութեան մասին»:

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆԱՅ Կեդրոնական Յանձնաժողովը, Բարիզ, զեկոյցով մը խորհուրդ կուտայ արտասահմանի Հայերուն աւելիս չտարաւիլ գուր յոյսերէ, այն է թրանզիթի կամ շատ կարճատեւ բնակութեան մը պատրուակով ֆրանսա դալ ու կարծել թէ իրենց համար դիւրին պիտի ըլլայ մշտական բը-

նակութեան իրաւունք ձեռք բերել: Նոյն խորհուրդը կուտանք, կը շարունակէ զեկոյցը, անոնց որ ֆրանսա կուգան չաշխատելու յանձնառութեամբ, յուսալով թէ ոեւէ կերպով մը կրնան աշխատելու իրաւունք ձեռք բերել կամ գաղտագողի աշխատիլ: Այս երկու կարելիութիւններու վրայ յոյս դնողները դատապարտուած են անվերջ չարչարանքներու և ձախդանքի»:

ՄԱՆՁԵՐՈՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ, Հալէպ, սկսաւ իր այս տարուան դպրոցական շրջանը Հոկտեմբերի սկիզբը. Գալէճի երկու կարգերուն մէջ 7 նոր ուսանողներ արձանագրուած են հաստատութեան նախապատրաստական բաժինէն գալէճ անցնող կարգէն գետ: Ուսուցչական մարմինն մէջ երկու նոր դէմքեր են Բ. Մարիւժ և Քրիստիան Պլազէ (Christian Blaser): Առաջինը Կ. Պոլսոյ մէջ էրէն Քէօյի Մանչերու Վարժարանին (Նախկին Պարտիզակի Վարժարան) մէջ 12 տարի ուսուցչական պաշտօն վարած է, փեսան է Պարտիզակի դպրոցին հիմնադիր Տր. Մէքնօթընի: Ունի Պսակաւոր Աստուածաբանութեան և Մագիստրոս Դաստիարակութեան (M. E) տիտղոսները: Մր. Մարիւժ իր դպրոցէն իբր նուէր 11 սընտուկ դպրոցական գոյքեր և գիրքեր բերած է: Մր. Մարիւժ պիտի «տանձնէ պաշտօնը Մր. Քարլթընի որ մօտ օրէն իբր միսինար Մուսուլ պիտի մեկնի: Քրիստիան Պլազէ, որ Զուիցերիոյ մէջ ուսումնաւարտ ըլլալէ ետքը տարի մը ուսուցչութեամբ զբաղած է, իրեն հայերեն կրթ Մ. Պիլլի տեղ ֆրանսերէնի և ֆրանսերէն լեզուով պատմութեան դասերը պիտի աւանդէ: Հաստատութեանը նախագահը Տր. Ճ. Մէրիլ շատ հաւանօրէն Յունուարի սկիզբը Ամերիկայէն ընտանեօք պիտի մեկնի դէպ ի Սուրիա, և Փետրուարի սկիզբը հոս ըլլալ կ'ապնակաւորի»:

ՍԵԼԱՆԻԿԻ Հայ Աւետ. Եկեղեցիի հովիւը Պատ. Կ. Ֆարաճեան մեղի ղրկած է Եկեղեցիի հոգաբարձութեան կողմէ կոչ մը, որմէ կը հասկնանք թէ նոյն Եկեղեցիին «Յունաստանի Հայ Աւետարանական Կեդրոնական Վարչութեան հետ համախորհուրդ ընտրած է Շէնքի Յանձնախումբ մը առեւտրականութեամբ Մր. Տ. Կէշլըլի, որ պաշտօն ունի Եկեղեցական շէնք մը շինել տալու կամ «Ժախու առնելու», և որ պիտի գիտէ Եկեղեցիացիք անհատներու և կազմակերպութիւններու բարոյական և նիւթական աջակցութեան: Ներկայիս իրենց կիրականօրեայ պաշտամունքները կը կատարեն անմիջապէս իրարու ետեւէն կէսօրէ ետքը ժամը 3—6 ին, Յոյն Աւետ. Եկեղեցիին սրահը: Եւ այս պարագան առաջին օրէն անհրաժեշտ դարձուցած է ապահովան շէնքի պէտքը:

ԱՄԵՐԻԿԵԱՆ Աղջկանց Ի. Վարժարանը Հալէպ, այս տարի արձանագրած

է 52 աշակերտուհիներ բացի հինգ մասնաւորներէ: Ասոնց 27 ընթերցողներ, որոնցմէ երկուքը Փրանսացի, երկուքը Հրեայ և հինգը Երիցական դպրոցէն ուսումնաւարտ արաբախօս քրիստոնեաներ են: Մնացեալ 83 ը հայուհիներ են:

Հ. ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ, բնիկ Մարտինիի և Վենետիկի Մխիթարեան Միաբանութիւնէն, տեղիէ միջեր Հալէպ կը գտնուի, ուր եկած է Ռափայէլեան Վարժարանի համար աշակերտներ ճարելու, երկվեցեակ մը պատանիներ արդէն արձանագրած է:

Տ. ՏԻՐԱՆ ՎՐԴ. ՆԵՐՍՍՅԱՆ, Երուսաղէմի միաբաններէն, հոգեւորամիտ և լաւ պատրաստուած երիտասարդ կրօնական մը, նոյնպէս ժառանգաւորացի համար աշակերտներ հաւաքելու պաշտօնով քաղաքս եկած էր: Արձանագրուած երիտասարդներէն արդէն 10 հատը մեկնած են Երուսաղէմ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

ԴՐՈՒԱԳՆԵՐ ԿԵԱՆՔԻՍ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

Տեքթ. Ա. Նազգաշեան 115 էջերէ բաղկացեալ այս հատորին մէջ իրեն յատուկ զուարճախօսութեամբ և սրամտութեամբ կը պատմէ իր Էփեսոսի կարգ մը դրուագները մանաւանդ ժամէն սկսեալ մինչև հիմա: Գրինքը սուրկայի համար 50 սէնթ և ուրիշ քրտիներու համար 6 ֆրանկ: Գրմել «Նոր Աւետարան»ի հասցէին:

ՓԻԼԱՐՏՈՍ ՀԱՅՐ

ԳՐԵՑ՝ ԿՈՄՍԱԳԵՆԱՑԻ

Կոմագենացիին հմուտ պատմագէտ մըն է որ գիտէ հաճելի ոճով ներկայացնել անցեալի դէպքերը: Հատորս 16 զուխներով գեղեցիկ եւ քննական ուսումնասիրութիւն մ'է Հայոց Պատմութեան Կիլիկիան շրջանին սկզբնաւորութեան մասին: Գրինք է 10 ֆրանք Սուրհոյ համար, կէս տուար ուրիշ երկիրներու համար: Ծաւալն է 95+ԺԶ էջ: Դիմել «Նոր Աւետարան»ի հասցէին: